նութբ մեծ վարժապետիս վերոյ ասացեալ Եսայեա· ի յիշխանութե ·եւ տէրութե ·համօրէն գաւառացս մեծ իշխանին Բուրթելի եւ որդոց նորին Պեչգենի եւ Իւանէի· իսկ ի տեղոյս տէրութե· Թոռանց մեծին Պռոշայ Ամիր Հասանայ եւ Ջումայի:

Արդ յաղերս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ինչ ի սմանէ ընթեռնլով կամ աւրինակելով՝ յիշեսջիք առ Քս զիս զանարժան գծողս եւ զա· երախտաւորքս, որք յիշեցան ի սմա, զի եւ ձեզ հասցէ մասն բարի ի բոլորեցունցն Այ, որում փառք յաւիտեանս ամէն:

## ՑԱՒԵԼՈՒԱԾ Բ· 27·

### Ա· Գիրք· 209·

### (Ձեռ· էջմ· No. 1601)

*Աւետարան, փոքրադիր, Թուղթ, շեղագրի մօտ բոլորգրով, եւ վերջում Հանդիստ Յովհաննու· վերջին կիսատ յիշատակարանը·*

Փառք ամենակարող եւ անբաժանելի սբ երրորդութեան, որ հասոյց զմեր տկարութիս յաւարտումն եւ ի վերջին գիծս սբ աւետարանիս: Արդ գրեցաւ սա ի թվականիս հայոց: ՉՃԶԶ: ի ձորիս Վայոյ: ի յանապատիս որ կոչի Բոլորաձոր... (Թուղթ կտրուած):

## ՑԱՒԵԼՈՒԱԾ Բ· 28·

### Ա· Գիրք· 232· ծ·

### Գ· Ց· No. 377/2634 Ձեռ· էջմ·

*Մարկոսի վերջում 103բ–104ա· ներքին լուսանցքներում·*

Քս ·Ած ·քո սբ ·չարչարանացդ եւ սբ ·յարութեդ ·բարեխաւսութբ, Թող զամ· զմեղս եւ զյանցանս ըստացողի սբ աւետարանիս, զՍատաղին եւ զիւր հայրն եւ մայրն, եւ զկենակցին իւրոյ զԴիլշատին Թող զմեղքն եւ քաւեա զյանցանս զիւրն եւ զիւր ծնողացն ամէն:

Եւ զիւրեանց որդիքն, զոր Եղիշայ, զՍակիկն, զՎարդան, զՀովադեղ, զԾապահանչայ, զՍալթանչայ, տր Ած ընդ երկայն աւուր առնէ ամէն:

*104բ· Ներքին լուսանցքում·*

Զարբայհամ տկարս յիշեայ եւ ասայ միշտ տր ողորմեայ:

*Ղուկասի վերջում, ներքին լուսանցքներում 168բ–169ա·*

Զտառապեալ ոգի մեղաւք զամէնամեղ զՍատաղայ եւ զկենակիցն իւր զԴիլշատն Յիշեա Քս Ած ի քում արքայութեդ: Եւ զանարժան գծող սորա քո սբ տեսոյդ արժանի արա Եւ զԵղիշա սբ քահանայ սմա վայելող, ընդ երկայն աւուր արա:

*218 բ· Յովհաննու վերջում· երկէջ յիշատակարան·*

Փառք անեղին, անմահին հաւր եւ որդոյ եւ հոգւոյն սրբոյ: այժմ եւ անզրաւ յաւիտենիւ ամէն: Որ ետ կարողութի տկարութեսս իմում հասանել ի վերջին գիծ, սբ եւ ածազարդ եւ հոգէբուխ ածախաւս աւետարանիս, քառավտակ եւ եդեմաբուխ՝ չորք վտակաւք արբուցանելով զպասքեալ ծարաւիս, ածադաւան սրբահաւատ ժողովրդոցս: Որ է սա դուռն երկնից եւ ճանապարհ արքայութե ըստ տն հրամանի· եթէ ես եմ ճանապարհ եւ դուռն մտից կենացն յաւիտենից· Սա է աւետաւոր յայսմ աշխարհիս, մեղաւորացս յոյս շնորհելով թողութե մեղաց: Սա է առաջնորդ եւ ցուց ապառնի, դիմել ի յերկինս առ անձկալին ամենեցուն Քս:

Արդ՝ եղեւ գրաւ գծագրութե սորա ի թվականիս հայոց մեծաց ՋԻԴ· ի կթղիկոսութե· տր· Սարգսի ընթանուր հայաստանեայց ազգի, ի յարհի եպսութե· մերում գաւառի տր· Յոհաննիսի, ածահաճոյ· եւ մաքուր սբ· հայրապետի, Թոռին մեծին Պռաւշայ, որ է առ դրան սբ· Գեղարդեան, եւ եղբաւր նորին տր Սփնսին, նորընծայ կուսակրաւն աբեղայի ,զոր տր ·Ած ·ընդ երկայն աւուր առնէ: Եւ միւս եպսի ·տր ·Եղիշայի, մաքուր եւ սբ ·հյրպի, Թոռին մեծին Բիւրթելեանց: Ի պրնութե· մերոյ նահանգիս մեծազգի եւ երեւելի իշխանաց իշխողի եւ բարեհաւատ՝ պրն· Ջումին, Թոռին մեծին Պռաւշայ՝ ասպարապետին հայոց եւ որդւոց նորին պրն· Լաղաբէկին, Ուլուսբէկին, Թուման բէկին· Եւ եղբ–

219ա· այր որդոց սորին պրն· Հայկազին, Ամիր Վասակին, Հաղբակին, Ամիր Հասանին, եղբարց՝ տր· Յոհաննիսին եւ տր· Սփնսին, զոր տր ·Ած ·ընդ երկայն աւուրս պահեսցէ զսոսայ յամ· փորձանաց հոգոյ եւ մարմնոյ· ամէն եւ եղիցի:

Եւ գծագրեալ եղեւ սբ աւետարանս ձեռամբ անարհեստ եւ սղալամիտ եւ փծուն գրչի, Աւագտէր սուտանուն բանասիրի, որ անուամբս եմ միայն եւ ոչ գործով· ի յերկիրս Եղեգեաց որ կոչի Վայոյ ձոր, ի յանապատիս Բոլորաբերդոյ, առ դրան սբ Ածածնիս, եւ սբ Կարապետիս եւ սբ ճգնաւորաց գերեզմանացս, որք աստ են հանգուցեալ: Առ ոտս երից երանեալ եւ քաջ հռետորի եւ բանիբուն վդի եւ անյաղթ փիլիսոփայի, վարժապետիս իմոյ՝ Սարգսի, զի որպէս զարեգակն փայլէ յաղգս հայոց: Եւ համշիրաք եղբարցս եւ ուսումնակցացս մերոց՝ Յակոբ վդին, Պգս վդին, Վրդան վդին, զոր տր Ած պահեսցէ զսոսայ ի փորձանաց սատանայի ամէն:

Նա եւ մարմնաւոր ազգակցացս իմոց, եղբաւրս իմ Տէր տէր միակեցի՝ եւ որդոց սորա տր Դաւթի՝ գրագրի եւ ածային շնորհաւքն լի ի կարգ քհութե եւ եղբարց սորին կուսակրաւն աբեղայիցս տր Զաքարին եւ տր Աբրահամին, ծաղկողի եւ կազմողի սբ աւետարանիս, եւ եղբարց սոցին Մարգարին եւ Յակոբ տնտեսին ի դրան սբ Ածածնիս եւ առ Քս փոխեցեալ հոգեւոր ծնողին իմոյ տր Երեմիայ Ճգնաւորին եւ մարմնաւոր ծնողացն իմ Յովանիսին եւ Մարթին եւ եղբարցն իմ Մուրատին, Հայրպտ դպրի եւ Խաչատրի եւ քվերն Խամուշի